ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Փետրվարի 25-26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով ընդլայնված կազմով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ժողովականներին՝ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներին: Այնուհետև Վեհափառ Հայրապետի կողմից կատարվեցին ծանուցումներ նախորդ ժողովի ընթացքին կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Օրակարգի քննարկումից և հաստատումից հետո Վեհափառ Հայրապետը հրավիրեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Կրոնական Ժողովի ատենապետ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին՝ տեղեկություններ հաղորդելու Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի առողջական վիճակի մասին: Սրբազան Հայրը հայտնեց, որ բժիշկների ախտորոշմամբ Պատրիարք Սրբազանի մոտ արձանագրված է հիշողության կորուստ և նրա հիվանդությունն անբուժելի է: Արամ Սրբազանը նաև տեղեկացրեց, որ Կրոնական Ժողովն այսուհանդերձ հայտարարել է Պատրիարքի ցկյանս լինելու հանգամանքի մասին: Սրբազան Հոր փոխանցմամբ՝ Կրոնական Ժողովը չի բացառել նաև անհրաժեշտության դեպքում Աթոռակից Պատրիարքի ընտրության հնարավորությունը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Սրբազան Հորը ներկայացված տեղեկությունների համար և ընդգծեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հարգելու է պոլսահայության կամքը և որոշումները՝ առնված Պատրիարքության ընկալյալ կարգի և կանոնադրական սկզբունքների համաձայն: Ապա Նորին Սրբությունը հրավիրեց ներկաներին՝ աղոթելու և հայցելու Աստծո օրհնությունն ու զորակցությունը Պատրիարք Սրբազանին:

Այնուհետև քննության առնվեցին թեմական և ծխական կանոնադրությունների ուղենիշերի վերամշակված նախագծերը, որոնց մասին զեկույցով հանդես եկավ թեմական և ծխական կանոնադրությունների ուղենիշերի մշակման հանձնախմբի նախագահ Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Սրբազան Հայրը տեղեկացրեց, որ հանձնախմբում հանգամանորեն քննարկվել են թեմերից ստացված առաջարկությունները, որոնց արդյունքում ձևավորվել է լրամշակված տարբերակը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակություն հայտնեց կատարված աշխատանքների համար և հետքննարկման համապատասխան փոփոխություններով հաստատեց թեմական և ծխական կանոնադրությունների նախագծերի լրամշակված տարբերակները: Առաջիկային հիշյալ փաստաթղթերը ներկայացվելու են թեմական-ներկայացուցչական ժողովի քննարկմանը:

Կաթոլիկ-Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից ստեղծված համատեղ ասպվածաբանական հանձնախմբի առաջին վեց հանդիպումների արդյունքների մասին զեկուցեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ.

Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Սրբազան Հայրը տեղեկացրեց, որ ստեղծվել է «Եկեղեցու էությունը, կառուցվածքը և առաքելությունը» վերտառությամբ փաստաթուղթը: Փաստաթուղթը Հայ Եկեղեցու աստվածաբանական տեսանկյունից քննելու և Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացնելու համար ստեղծվեց համապատասխան հանձնախումբ:

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի ժամանակ ներկայացվեց նաև Մայր Աթոռի տարեկան գործունեության ֆինանսական տեղեկագիրը:

Օրակարգում ընդգրկված էին նաև ներեկեղեցական և միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ